Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի հ. 201 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի «Կենսաբանություն» (13 դասաժամ) առարկայի ուսուցչի, «Ինֆորմատիկա» (5 դասաժամ) առարկայի ուսուցչի, «ՆԶՊ» (3 դասաժամ) առարկայի ուսուցչի, «Կերպարվեստ» (3 դասաժամ) առարկայի ուսուցչի, «Տեխնոլոգիա» (տղաներ, 4 դասաժամ) առարկայի ուսուցչի և դասվարի (16 դասաժամ) թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝թեստավորման և հարցազրույցի: Թեստվորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-՝Հանրակրթության մասին՝ ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբեյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն (Ձև 5),

-այլ պետությունների քաղաքացիները, ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև **հունիսի 29-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **հունիսի 30-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Երևանի հ. 201 հիմնական դպրոցում, հասցեն՝ ք. Երևան, Ավան, Աճառյան 40:

Տեղեկությունների համար զանգահարել (010)61-28-40 հեռախոսահամարով: